

Վեհափառ Կաթողիկոսի Հեռագիրը.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ

Ի մեծաշուք աւուրս Սրբազան
Թագադրութեան Չերդ Կայսերա-
կան Մեծութեան և Օգոստափառ
Թագուհւոյ Կայսրուհւոյ՝ առաջի Իջ-
ման ս. Սեղանոյ Միաձնի Որդւոյն
Ըստուծոյ ընդ համայն միաբանու-
թեան նախաթող վանուց ս. Իջ-
միաձնի վերառաքեմք ի բարձունս
զաղօթս ջերմագինս յազազս ա-
ռողջութեան և բարօրութեան Չերդ
Մեծութեանց: Երկարեցէ Տէր զա-
ւուրս Չեր ի փառս և յերջանկու-
թիւն Մեծին Ռուսեայ

ՄԿՐՏԻՁ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԻՒՆԸ ԴԵՊԻ ԿԱՐՍ.

Ապրիլ 7

Արարի աջ աստի Սուրբաւուրի Ա. մասի պրիս-
տան իր ձիաւորներով սպասում էր Նորին
Վեհափառութեան գալստեան: Կամուրջն անց-
նելուց յետոյ Հայրիկը կառքը կանգնեցրեց
օրհնեց պրիստաւին և ղիմաւորելու համար
ընդ առաջ եկող Իգդիրցի ձիաւորներին ու
շարունակեց ծանապարհը: Ձիաւոր ղիմաւո-
րողներ թիւը հեաղհեաէ ստուարանում էր:
Ուղիղ ժամը 4-ին Հայրապետական գնացքը
մուտ գործեց Իգդիր: Բացի Իգդիրի Իգդիր-
մաւայի և Բահարլուի ժողովրդից՝ շատ հա-
յրանակ զիւղերից հայ և թուրք հաւաքուել
էին Իգդիր: Հայոց Հայրիկին ղիմաւորելու:
Ամբողջ զիւղը տօնական կերպարանք էր առել և
զարդարուած էր զորշակներով ու ծառի կանաչ
ձիւղերով: Բոլոր խանութներն անխտիր փակ
էին, այն փողոցները, որտեղից պիտի անց
կենար Հայրապետական գնացքը, զարդարուած

էին կանաչից հիւսած շղթաներով: պատերը
զարդարուած էին գորգերով, մետաքսի թաշկի-
նակներով: Իսկ ժողովուրդը այնպէս էր խռնը-
ուած այդ փողոցներում որ հազիւ կառքերը կա-
րողանում էին շարժուել: Անընդհատ խոսում
էին «կեցցէ, Հայրիկ» խօսքերը: Կառքերը կանգ
առան եկեղեցի տանող կարճ փողոցի առաջ,
ուր կանգնեցրած էր յաղթական կամար: միջ-
տեղում ամրացրած էր Հայրապետի մեծադիր
պատկերը, ծաղիկներից ու կանաչից հիւսած
պսակի միջ, Կառքից ցած իջնելով՝ ղիմաւորող
քահանաների և հիւսուող վարդապետների
հետ միասին, պատշաճաւոր «Հրաշափառ» շա-
րականն ասելով՝ Վեհափառ մտաւ եկեղեցի և
աղօթելուց յետոյ ներկայ գտնուեց երեկոյեան
ժամերգութեան: Երգում էր ձեմարանի եկեղ-
երաժշտութեան ուսուցիչ Տ. Կոմիտաս վարդա-
պետը, որ մի քանի օր առաջ եկել էր Իգդիր:
Ժողովրդական երգեր ու «Էլէէ» ներ ժողովելու:

Ժամերգութիւնից յետոյ Վ. Հայրապետը
օրհնեց ժողովրդին խոստանալով կիւրակէ օրը
խօսել նրանց հետ: Հանդիսաւոր գնացքը նոյն
կարգով ուղեորուեց Հայրապետի համար պատ-
րաստուած օթեանը, որդերից և երկար կեցցե-
ների ուղեկցութեամբ: Պ. Սեղրակ տէր-Թովմա-
սեանի տունը, որ պատրաստուած էր Մեծ
հիւրի համար, դրոյց զարդարուած էր կանաչ-
ներով և ծաղիկներով, իսկ ներսից՝ համեստ
բայց ճաշակաւոր կահաւորուած: Այդ օրը
յոգնած լինելով Վեհափառը չկարողացաւ շա-
տերին ընդունել, բայց բնակարանի բակը և
լուսամուտների առաջ փողոցում հաւաքուած
մեծ բաղմութիւնը մինչև ուշ գիշեր երգում
նուազում և կեցցէներով օդն էր թնդացնում:

Յաջորդ օրը, ապրելի 8-ին առաւօտեան 10
ժամին ներկայացան Նորին Վեհափառութեան
Իգդիրի զաւառագետը և տեղական զօրաց հրա-
մանատարը: Եկեղեցի իջնելով Վեհափառ Հայրա-
պետը պատարագից վերջ իր բարձր ուշադրու-
թիւնը դարձրեց եկեղեցու փոքրութեան և ան-
շրջութեան վրայ, խօսեց ընտանեկան սիրոյ մա-
օին օրհնեց բոլորին և զնաց հանգստանալու:
Ճաշից յետոյ խումբ խումբ կանայք, օրիորդներ
երիտասարդներ և տղամարդիկ գնում էին Հո-
ղեօր հօր աջը համբուրելու: Տէր-Թովմասեան-
ների տունը այդ օրը մի կատարեալ ուխտա-

տեղւոյ էր փոխուել: Ներկայացան և պարսիկ բեկեր իրանց հոգեւորականներէ հետ և մի պարսիկ ուղերձ կարգաց պարսիկէն լեզուով:

Ապրիլի 9-ին առաւօտեան 6 ժամին Հայոց Հայրիկը բարեհաճեց հրաժեշտի ողջոյն տալ իր զինուորացիներէն և մեկնել դէպի Կողբ բաւական թուով մարդիկ ձիերով և թէ կառքերով ուղեկցեցին իրանց Մեծ հիւրին՝ մինչև Վարդապետ իջևանք: որակից Վեհափառ Հայրապետը յետ դարձրեց նրանց:

Այլիչայ կոչուած վտակի մօտերից երեւցին Կողբեցի ձիաւորներ, որոնք եկել էին Հայրիկին զինուորելու: Իսկ Կողբի մօտ թէ ձիաւորների և թէ հետեակ մարդկանց թիւը հետզհետէ ստուգարանում էր: Գիւղի ծայրին արքունի ճանապարհի վրայ կապած էր յաղթական կամար Հայրապետի պատկերով: Եկեղեցու բակի դռանը կանգնած էր նոյնպէս յաղթական կամար «կեցցէ Հայրիկ» վերտառութեամբ: Վեհափառ Հայրապետը իջնելով եկեղեցու դռանը և պատշաճաւոր աղօթքն ասելով՝ անկարող եղաւ իր ողջոյնը տալ աստիկ իրարանցման պատճառով: Վեհափառ Հայրապետի համար տեղէր պատրաստուած շինական դատարանում, ուր և գնաց հանգստանալու ճաշից յետոյ ցանկութիւն յայտնեց երանելի եղնիկ Կողբացու մատուռը տեսնել, որ գտնուում է գիւղամիջում, հին գերեզմանատանը: Սա մի փոքրիկ նեղ անցքով մատուռ է, քայքայուած, չորս կողմը կեղտու ապականութիւն լցած: Ծերունի Հայրապետը ներս մտաւ և բաւական ժամանակ արտասուելով աղօթք էր անում: Մատուռի շուրջը հաւաքուած էր մեծ բազմութիւն, Վեհափառ Հայրապետը դուրս գալով մատուռից՝ դարձաւ դէպի ժողովուրդը մօտաւորապէս այս խօսքերով: Գուք Կողբեցիներդ չգիտէք, թէ ինչ մեծ գանձ ունիք ձեր գիւղում: Գուք չէք ճանաչում ձեր հայրենակից եղնիկ Կողբացուն, որ առաջին թարգմանիչներից էր և մեզ հայ լեզուով ու տառերով սուրբ գիրքը տուեց, ապա հայրաբար յանդիմանեց, որ այդպիսի սուրբ վարդապետի նշխարների վրայ կանգուն է մնացել միայն մի աւերակ մատուռ: որի չորս կողմը անմաքրութիւն է տիրում: պատուիրեց անպատճառ եղնիկի գերեզմանի վրայ կառու-

ցանել շնորհքով եկեղեցի, իւր կողմից խոտանալով աջակցել այդ եկեղեցու շինութեան:

Այս օրից յետոյ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց գնալ Կողբի նշանաւոր աղահանքը տեսնելու: որտեղ պ. Զանփոխատեանի իւր արամադրութեան սակ դրած գումարը բաժանեց աղահանքում աշխատողներին, թէ ընդունեց և վերադարձաւ:

Յաջորդ առաւօտեան 7 ժամին Հայրապետը բարեհաճեց ուղևորուել դէպի Կաղզուան՝ օրհնելով հաւաքուած Կողբեցիներին, որոնք կեցցէների հետ միասին բարիերթ էին մոտջութում իրանց Հայրիկին:

Կարսի յաջորդ Կիւրեղ վարդապետը Կաղզուանի հասարակութիւնից ընտրուած երեք պատգամաւորների հետ զինուորելու էր եկել մինչև առաջին կայարանը, ուր պատրաստուած էր և նախաճաշ: Մի ժամ հանգըստանալուց յետոյ՝ Վեհափառը կառք նստեց: Կայարանից քիչ հեռու երեւացին զինուորող բաւական թուով ձիաւորների, իսկ Աղչայ կայարանում՝ արդէն խոնուել էին մի քանի հարիւր ձիաւորներ, որոնք Վեհափառի կառքը երեւալուն պէս օղը թնդեցրին «կեցցէներով»:

Այս օրից յետոյ ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը մոտ գործեց Կաղզուան: Խանութները բոլորը փակուած էին, քաղաքը զարդարուած էր զօշակներով, իսկ փողոցներում՝ ասեղ ձգելու տեղ չկար: մի քանի տեղ կազմել էին յաղթական կամարներ: Հայոց եկեղեցու մօտ Մեծ հիւրին սպասում էին դեպուտատները աղու հացով, թուրք հոգեւորականութիւնը իր ժողովրդով, և բոլոր աղգերից անհամար ժողովուրդ: Հայ զինուորները՝ թուով 500, կանգնած էին երկկարգ մինչև եկեղեցու դուռը: Վեհափառ Հայրիկը կառքից իջնելով ընդունեց մատուցած աղ ու հացը, մտաւ մայհոյանու տակ և զիմեց եկեղեցի, և կարճ աղօթքից յետոյ դուրս ելնելով, ուղղուեց իրեն համար պատրաստած օթեանը՝ պ. Մուռազեանի բնակարանը:

Այդ օրը ներկայացան Վեհափառ Հայրապետին Կաղզուանի շրջանի կառավարիչը, հետեակ և սահմանապահ զօրաց հրամանատարները և հասարակութեան հայ և տաճիկ ներկայացու-

ցիւները իսկ երեկոյեան Վեհափառ Հայրիկը բարեհաճեց կանչել Կաղզուանի առաջաւոր մարդկանց և խօսել առօրեայ ցաւերի մասին, որ աւեց մօտ երկու ժամ։ Երկրորդ օրը անձամբ զնաց նորակառոյց եկեղեցին աւանելու, որ այնքան վեճերի ու անախորժութիւնների առիթ է տուել։ Երեկոյեան կրկին հրաւիրեց առաջաւորներին եկեղեցու շինութեան մասին խօսելու, որտեղ հասարակութիւնից բնորոշած պատգամաւորները յայանեցին, որ ժողովրդի ցանկութիւնն է հնազանդուել Հայրապետական կամբին, նոյնը կրկնեց և եկեղեցի կառուցանող պ. Զանփուրաւեանը։

Վեհափառ Հայրիկը ցանկութիւն յայտնեց որ պ. Զանփուրաւեանը եկեղեցին վերջացնէ, և առաջարկեց մօռանալ այն բոլոր անախորժութիւնները, որ մինչև այդ ժամանակ աեղի են ունեցել։

Վեհի Կաղզուանում եղած ժամանակ խմբերով դալիս էին երկու սեռի մարդիկ Հոգեւոր Տիրոջ օրհնութիւնն ստանալու։ Մերու նազարդ Հայրապետը մի քանի անգամ պատըզամբ դուրս գալով խօսեց ժողոված մարդկանց և կանանց հետ, մարդու և կնոջ պարտաւորութիւնների, աշխատանքի օգտակարութեան մասին, և աւելացրեց, որ երբ եկեղեցին պատրաստ կլինի, նորից կգայ և եկեղեցու մէջ աւելի երկար կխօսի իրանց հետ։

Ապրելի 12-ին Կարսից երկու պատգամաւորներ եկան Կաղզուան Վեհափառ Հայրապետին Կարս հրաւիրելու, նոյն երեկոյին Հայրապետը բարեհաճեց դուրս գալ ընդհանուր սեղանատունը և օրհնել սեղանը, իսկ 13-ին առաւօտեան օրհնելով Մուռուզեան ընտանիքին իրան հիւրասիրելու համար, օրհնեց և փողոցում խոնուած հոծ բազմութիւնը և ժամը 7-ին ուղեորուեց դէպի Կարս։

Կէս ճանապարհին՝ Փասլի կայարանում, նախաճաշ էր պատրաստած, մինչև ուր ճանապարհ ձգելու էին եկել Կաղզուանցի շատ մարդիկ, իսկ Կարսաւոյ կայարանում պատրաստուած էր ճաշ, որտեղ զիմաւորելու էին եկել Կարսի շրջանի կառավարիչը, բազմութիւն ձիւաւորներ և շատ քաղաքացիներ կառքերով, այնտեղ էր եկել և շրջանի քուրդ ցեղապետը և պարսից զազին իր իշխաններով, ճաշից

յետոյ ժամը 2-ին զնացքը շարժուեց դէպի Կարս, կառքը շրջապատուած էր հարիւրաւոր ձիւաւորներով, իսկ յետեւից դալիս էր մօտ 40 կառք։ Կարս քաղաքը ամբողջովին դուրս էր եկել ընդունելու Հայոց Հայրապետին։ Քաղաքի սահմանի վրայ զիմաւորեց Վեհին ոստիկանապետը, փողոցները պատշգամբներ, տանիքներ լիքն էին երկու սեռի բոլոր ազգերի անհասներով, իսկ եկեղեցու առաջ տակ ձգելու տեղ չկար, կանգնեցրած էր չքեղ յաղթական կամար, որի տակ քաղաքի երեք դեպուտատները Վեհափառ Տիրոջը աղ ու հաց մատուցին, իսկ աշակերտ և աշակերտուհիներից կազմած երգեցիկ խումբը՝ հրաշափառ երգելով, հոգեւորական դասով և մեծ թափօրով մասա եկեղեցին, ժողովրդից ոչ ոքի թոյլ չըտուն մտնել եկեղեցի, որովհետև սա այնքան փոքր էր, որ կարգ պահպանելն այնտեղ դժուար կլինէր։

Կարսում Վեհափառ հիւրին ընդունելու համար կազմուած էր յատուկ յանձնաժողով, որ ամեն կերպ աշխատել էր ընդունելութիւնը փառաւոր դարձնել, հանգստանսղու համար պատրաստուած էր պ.Տ. Մկրտումեանի բնակարանը։ Նոյն օրը երեկոյեան 6 ժամին այցելութեան եկաւ Կարսի նահանգապետը, այնուհետև ընդունելութեան յանձնաժողովի անդամները և ուրիշ այցելուներ ընդունուեցան։ Իսկ ապրիլի 14-ի առաւօտեան 10 ժամին ներկայացան քաղաքի հայ տաճիկ և յոյն դեպուտատները, հայ կաթողիկ պարսիկ և տաճիկ հոգեւորականութիւնը, իրանց պատուաւոր աշխարհականների հետ միասին։ Ժամը 11 1/2-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց այցելել ռուսաց Մայր եկեղեցին, որ Հայոց Աբաս թագաւորի շինել տուած Առաքելոց եկեղեցին է։

Ժամը ձիւտ 12-ին Վեհափառ Հայրապետը այցելեց պ. նահանգապետին, փերագործին բարեհաճեց զիտել Եղիշէ վարդապետի փոխանորդութեան ժամանակ շինուած Հոգեւոր իշխանութեան պատկանող տունը և սուրճ ընդունել այնտեղ։ Պ. Մկրտումեանի տան շուրջը խոնուած էր ահագին բազմութիւն, որ խումբ խումբ Վեհափառ Հօր աջը համբուրելուն էին արժանանում։

Ապրելի 15-ին Վեհափառ Հայրապետը

բարեհաճեց զիսել քաղաքը մտակայ ամբու-
թիւններէ մէկէ վրայից, ճանապարհին զիմա-
ւորեց Նորին Վեհափառութեան եկեղեցական
թափորով հայկաթոյի Հոգեւորականութիւնը
և առաջնորդեց զէպի եկեղեցիս ուր քահա-
նանքից մինը ուղերձ կարգաց' ողջունելով
Հայոց Հովուապետի մուտքը Կարս: Վեհափառ
Հայրապետը Հայրիկեան լեզուով խօսեց եղբայր-
սիրութեան և ընկերսիրութեան մասին՝ յի-
շեցնելով Պեշիկթաշիկեան խօսքերը: Ընդ աս-
ախդք զի նշ կայ սիրուն քան զանձկալի եղբայր
անուն: Եւ յորդոր կարգաց բոլոր հայերէն իրրե-
կայրներ սիրել իրար, ապա մասնացոյց լի-
նելով սեզանի վրայ բազմեցրած Սեդրեւորոսի և
Պրիգոր Լուսաւորչի զբկատանութեան պատ-
կերի վրայ՝ աւելացրեց. Ես այն մոլոսանդ կրօ-
նաւորներէց չեմ, որոնք կրօնական անհամբերո-
ղութեամբ ատում են ուրիշ կրօն դաւանողնե-
րին, ինձ համար բաւական է, եթէ ճշմարտ
քրիստոնէս է՝ սիրող ընկերին, եղբորը, բա-
րեկամին, մենք բոլորս իրրեւ Հայկի զաւակներ՝
եղբայրներ ենք, և մեր շահերը ընդհանուր են: Եւ
Ապա օրհնելով ներկայ եղող երկսեռ ունկըն-
դիրներին, շարունակեց իւր ճանապարհը: Զբօ-
սանքից վերադառնալիս այցելեց թիւրքաց և
պարսից մկիթները, երբ միտաբէի գլխից տե-
սաւ երգիչը Վեհափառի կառքի մօտեակը
պարսից մկիթին, բարձր և քաղցր ձայնով
սկսեց իր աղօթքը, իսկ մկիթ մտնելիս՝ բարի
գալուստ երգեց մի ուրիշ պարսիկ շատ սրտա-
ուռ և եղանակով: Մկիթը ներսից զարդարուած
էր թանկագին գորգերով և կերպաներով:
Այստեղ Վեհափառ Հայրապետը տեղեկութիւն
ստացաւ պարսիկների թուի և նիւթական դու-
թեան մասին, օրհնեց ամենքին և ուղեւորուեց
զէպի յունաց եկեղեցին, իսկ այնտեղից՝ իր
օթեանը:

Կէսօրից յետոյ անկարող լինելով մաւ-մաւ
ընդունել ամենքին՝ Վեհափառը դուրս եկաւ
պատշգամբ խօսեց ներկայ եղողներէ հետ, ցաւ
յայտնեց, որ Կարսը իրան համապատասխան
եկեղեցի չունի, որտեղ կարելի լինէր խօսել, և
յոյս առաւ, որ միւս անգամ գալիս կ'ստի
իրանց հետ նոր կառուցուած ընդարձակ եկե-
ղեցում:

Ապրելի 16-ին երկաթուղով Վեհափառը

մեկնեց քաղաքից զէպի Աղեքսանդրապոլ, քաղ-
ցրը և անմոռանալի յիշողութիւն թողնելով
ամենքի սրտում: Վեհափառ Հայրապետի Կարս
մանելը յաւերժացնելու համար եղբ. Բաղդա-
սարեանները նուիրեցին 240 ք. ա. սարածու-
թեամբ մի դեղին հայոց նոր եկեղեցի շինելու
համար: Կարսը երեք օր շարունակ տօնական
կերպարանք ունէր:

Ապրելի 17-ին մնալով Աղեքսանդրապո-
լում՝ Վեհափառ Հայրապետը մեկնեց Սանահին
վանքը, վանքը վերանորոգելու մասին կարգա-
դրութիւններ անելու, սակայն ճարտարապետ-
ները խորհուրդ էին առել նախ երկաթու-
ղուց զէպի վանք տանող ճանապարհը շինել,
ապա ձեռնարկել վանքի վերանորոգութեան
գործին: Որպէսզի հետաւոր լինի վերանորո-
գութեան համար հարկաւոր նիւթերը հեշ-
տութեամբ տեղափոխել:

Մի քանի օր Սանահնում մնալուց յետոյ
Վեհափառ Հայրապետը բարեհաճեց վերա-
դառնալ ս. Եջմիածին Դիլիջանի վրայով: Դանա-
պարհին հանգստանալով Սեանայ վանքում
Մայիսի 1-ին Նորին ս. Ռոմութիւնը ողջամբ
Ժամանեց Մայր Աթոռ:

Իգդիր, Կողր, Կաղզուան և Կարս ուր
Նորին Սրբութիւնը առաջին անգամն էր այցե-
լում և ուր նախկին կաթողիկոսներից երկար
Ժամանակ ոչ ոք չէր գնացել, մեծ տպաւորու-
թիւն գործեցին Հայրիկի քարոզներն ու վրոյց-
ները, և այդ տեղերում անջնջիլ յիշատակ
մնաց ժողովրդի սրտի մէջ:

ՌԻՎԵՏԻՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԽՈՐ ՎԻՐԱՊ.

Ազգիս Վեհափառ Հայրապետը Ս. Գրի-
գոր Լուսաւորչի - Եւնի ի վերապէս՝ տօնը Խորվի-
րապում կատարել ցանկանալով՝ հաճեցաւ մա-
յիսի 30-ին, չորեքշաբթի օրը, ճաշից յետոյ Ժա-
մբ 4-ին, Ս. Եջմիածնից ճանապարհընկնել զէպի
Երեան: Նորին Սրբութեանը ուղեկցում էին
Արթ. Տ. Յուսիկ և Տ. Կորիւն վարդապետները:
Երեանից մինչև այդեւտանը զիմաւորելու էր
եկել Դեր. Սուքիաս Արքեպիսկոպոսը մի խումբ
քահանաների հետ: Այդ զիշեր Երեանի ա-
ռաջնորդարանում մնալով՝ յաջորդ օրը ճա-